

Արտաշէն Գրիգորի երկրին մէջ, Համէնի մեծ գետի վերի ակնբուն մօտ մի հսկայ բերդ կը կառուցանէ: որ այս օր ևս Արտաշէն կասուի:

Համէնցիք Տրպիզօնի հայ գիւղացւոց տիպարն ունին: ըստ տեղւոյն պիտի խօսիմ՝ Տրպիզօնի գիւղացւոց վարուց բարուց և երկրի դրեց վերայ:

Համէնի անտառներու մէջ հազարաւոր տարեկան ծառերու և փայտերու մէջ հարիւրաւոր տարուան մեղր կայ իրարու վերայ դիզուած և բիւրեղացած, զորս առատօրէն տակառներով կը բերեն Տրպիզօն վաճառելու: որ ուրազով կամ կացնով հաղիւ հազ կը կարողանան մաս մաս բաժանել:

Անիի յիշատակներն որոնողները թող մտնեն այս ընդարձակ և անտառաշատ երկիրն: մեծ պաշար պիտի հայթայթեն:

1840 թուականներուն Համէնի և Սև Գետացոց մէջ գարձեալ մեծ ճնշում եղաւ թուրք մուշլաներու կողմէ: որ այլևս հայերէն չխօսին. «հայերէն կօթը բար մի հայհոյութիւն է» ասացին: մօլլաները անէ տուն մտան, ստիպեցին հայերէն խօսիլն արդիւիւ, կանայք նեղ մնալով քանի դիւղերից փայտի հարուածներով արտաքսեցին գմուշաններն, իսկ այր մարդիկ երկիւղ կրելով թէ կոտորած առաջ պիտի գայ, կը հաւաքուին իրենց աղայի մօտ ուր որոշում կանեն թէ ով որ հայերէն խօսի իրենց աղային հինգ ոչխար տուգանք տայ:

Եւ այս հետեւեալ դէպքն առած դարձած է ժողովրդեան մէջ, նոյն իսկ Սև Գետացոց և Համէնցոց մէջ. նաև սորա նման շատ առածներ:

—Մի օր կարանն մի կազմած և ջորիներուն ցորեան բարձած Բարերգէն երբ կը գանային, մէկին խորձը պատահեցաւ, ցորեանը սկսաւ հոսիլ, սորա տէրն ձայն ձգեց ընկերներէն մէկուն: ծօ, Մանուկ օղլի հասան, Մախաթ նիւր է, ցորեն թնօքիւտի, Հասան իրրե թէ հայերէն չխօսիր կը պատասխանէ.—ծօ, հէյերէն խորաթեցիր, աղայա պէշ (աղային հինգ) օչխար վերէճէքսուն (պիտի տաս):

—Թող օղլէ օլտուն (այնպէս լինի) մախաթ, մախաթ նիւր է.—Օօ, քեզիկի շատի մախաթ գաթըն (ջորիին) ճակատինտա տուր.—Օօ, դուն էլ հէյերէն գօնուշտուն, աղայա պէշ օչխար ասաց երկրորդն առաջնոյն:

—Օօ, ինցօ ընիմ, թող օղլէ օլտուն, իդա շօնլակոյտ սէպէպ օլտի:

Երկուքն ևս հինգ հինգ ոչխար տուգանք տուին, աղան տեսնելով որ մէջն մեծ շահ կայ, հետամուտ եղաւ, ամեն կողմ լրտեսներ գրաւ որ հայերէն չը խօսեն:

Հայկունի.

(Շարունակելի)

1. Ընկուզի կոծի հաւաքելու համար այս երկիր մտնող հայք կը հաւատացնեն թէ քաղմթիւ տներու մէջ տեսած են եկեղեցական ֆին անօթներ, որք երբևէ նուիրական կամ սրբութիւն մի պահած են, այլ եւ ուրիշ հուրթիւններ, ճեւազիւրներ ևւն. որ ինձ շատ հաւատալի է, նորա համար որ հաւատարիմ անձերէ լսած եմ:



ԲԱՆՆԱՍԻՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԳՊՐՈՅՆԵՐԸ ԿԱՄ ՄԱՆԿԱՆՅ ԺԱՄԱՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ ԳԵՐՄԱՆՆԱՅՈՒՄ

Նոր չէ այն գաղափարը, որ եկեղեցու մէջ կրօնական կեանքը վառ պահելու և զարգացնելու համար՝ մանուկների կրօնական դաստիարակութեան վերայ առանձին ուշք դարձնել պէտք է և որ այդ դաստիարակութեան մեծապէս նպաստել կարող է նոցա ըմբռնման յարմարեցրած ժամապաշտութիւնը: Գեո 1429 թուին սքոլաստիկ Գերսոնը լուրջ ուշադրութիւն էր հրաւիրում այդ խնդրի վերայ՝ այն համոզմամբ, որ «եկեղեցւոյ վերանորոգութիւնը մանուկներից պէտք է սկսի»: Բնական է, որ այդպիսի մի վերանորոգութեան ձգտումով յառաջ եկած յեղափոխութիւնը (Ռեֆորմացիան) առանձին զարկ պէտք է տար մանուկների կրօնական դաստիարակութեան գործին: Բողոքականութիւնը վերցնելով եկեղեցու միջից ծէսեր, արարողութիւններ, պատկերներ, տօնախմբութիւններ՝ և այդ բոլորի փոխարէն պարզ խօսքը միայն պահելով՝ բոլորովին տգէտ մարդու և ի մասնաւորի մանուկների համար անհետաքրքիր և անմատչելի էր դարձնում ժամապաշտութիւնը: Այդ կարիքի առաջն առնելու՝ մանուկներին և հասարակ մարդոց քրիստոնէական վարդապետութեան ամենատարրական գիտելիքները հաղորդելու համար, որպէս զի նոքա եկեղեցում կարդացուած ս. Գրքից և խօսուած քարոզներից մի բան հասկանան, լուտեր կազմեց փոքր հաւատապատումը, որ մինչև այժմ էլ բողոքական եկեղեցու գլխաւոր դաւանական գրքերից մէկն է՝ բացարձակապէս իշխող կրօնի դաստառութեան վերայ և որի դաւանական ճշդութեան ու գործնական արժէքի մասին հիացումով են խօսում միշտ բողոքականները: Այդ հաւատապատումը, լուտերի յօրինած եկեղե-

ցական երգերից յետոյ նորա առաքելութեան գլխաւոր մի ղէնքը կարելի էր համարել ուստի և կաթողիկեկեղեցին հակառակ ազդեցութիւն գործելու համար՝ կազմեց նոյն օրինակով ուրիշ հաստատարութիւններ և այսպէս նորա հետզհետէ ընդհանրութիւն ստանալով կրօնի դասատուութեան գլխաւոր գործիքը գարձան: Գորա հետ միասին արդէն 16 և 17-րդ դարերում փորձեր եղան մի քանի տեղ ինչպէս օրինակ նոյն իսկ Մոսկուայում՝ 1684 - ինչ մանկանց համար առանձին ժամապաշտութիւն և դպրոցից անկախ կրօնի դասատուութիւն յարգարելու: Սակայն այս խնդիրը տեղի գործնական և ընդհանուր նշանակութիւն ստացաւ 18 րդ դարու սկզբին պիէտիզմի շնորհիւ որ ճշմարիտ կրօնը գաւանարանական վէճերից, եկեղեցական նեղ սահմաններից հանելու և կեանքի մէջ, ընտանիքի մէջ մտցնելու ձգտումով մեծ խնամք սկսեց տանել մանուկների կրթութեան վերայ: Յառաջ եկաւ կոնֆիքիւնները (14—15 տարեկան հասակում հաղորդութիւն ընդունելով եկեղեցու անդամ գրուող ազաներին և աղջիկներին) կրօնական գիտելիքներով նախապատրաստելու սովորութիւնը որ և սկսուեց Աբուսա Ֆրանկէի նշանաւոր որբանոցի մէջ, շալէում: * Շատ չանցած եղբայրական համայնքների հիմնադիր կոմս Յիցենգորֆը Մանկանց խմբերը կազմակերպեց և ինչ Առաջին անգամ կիրակնօրեայ դպրոցներ խմբական սիստեմով ինչպէս այժմ՝ ցանկ հիմնեց 1781 թ. ին Աորերա Ապլէտը: Նորա շուտով սկսան տարածուել Անգլիայում և Ամերիկայում: մուտ գործեցին հետզհետէ նաև Գերմանիա Այստեղ այդ դպրոցների ծննդեան իսկական տարին համարուում է 1863 թ.՝ը, երբ Ամերիկացի Վուգորֆը Գերմանիա գնալով սկզբեց ամէն տեղ տարածել մանկանց ժամապաշտութեան կամ կիրակնօրեայ դպրոցի գաղափարը՝ խմբական սիստեմով: 1889 թ. ին

3251 այդպիսի դպրոցներ կային միայն Գերմանիայում: ուր աշխատում էին 20,220 ուսուցիչներ ու ուսուցչուհիք և ուսանում՝ 410,981 մանուկներ: իսկ բոլոր տեղերում գտնուած կիրակնօրեայ դպրոցների թիւը 183,390 էր 1,699,569 օգնողներով և 17,716,212 մանուկներով: Այսօր այդ թիւը շատ աւելի աճել է ի հարկէ: մանաւանդ Գերմանիայում ուր աշխատում են բոլոր եկեղեցիների համար, ինչպէս ընդհանուր է այդ Անգլիայում և Ամերիկայում: կիրակնօրեայ դպրոցներ կազմակերպել: Այստեղ նորա տեղի են ունենում սովորաբար նոյն իսկ եկեղեցու մէջ, ուստի և շատ տեղեր մանկանց ժամապաշտութիւն են կոչուում: որ տեղի յարմար և ճիշդ անուճն է:

Կիրակէ օրերը հասակաւորների ժամապաշտութիւնից և քարոզից յետոյ եկեղեցի են ժողովուում մանուկները: Նորա բաժանուած են լինում դանազան խմբերի և իւրաքանչիւրը ունենում է իւր ղեկավարը կամ ինչպէս կոչում են այստեղ՝ օգնողը: ընդհանուրին առաջնորդում է պատարը: Մեծ քաղաքներում: ինչպէս օրինակ Բերլինում: ուր եկեղեցիներ կան որոնք 100—130 հազար հոգի ծախ ունին՝ անկարելի է լինում երբեմն համայնքից յաճախող բոլոր մանուկներին միատեղ ժողովել այն ժամանակ մի մասը առանձին դպրոց է կազմում: սովորաբար որ և է ուսումնարանի գահլիճում: Բերլինում ես օգնող էի մի քանի ամիս այսպիսի մի դպրոցում: օրի ղեկավարն էր համալսարանի աստուածաբանութեան երիտասարդ դասախօսներից մէկը: Մեր դպրոցը շուրջ 300 երկսեռ մանուկներ էին յաճախում: օգնողների պակասութիւն չը կար, որովհետև այդ պաշտօնը կատարողները աստուածաբանութեան ուսանողներ էին և մի քանի օրիորդներ: իւրաքանչիւր խումբ բաղկացած էր միայն 10 20 մանուկներից: կան դպրոցներ, որոնց մէջ մանուկների թիւը 1000-ից անցնում է: օգնողների սակաւութեան պատճառով սախալուած են

* Այդ մեծ հաստատութիւնը շարունակում է զեն իւր քարնորար գործունէութիւնը: Կաշխատանք մի ուրիշ անգամ ծանօթութիւն տալ նորա մասին:

50—60 մինչև իսկ 100 մանուկ մէկի հըսկողութեան յանձնել: Այդպէս հարկաշատ դժուարանում է գործը և կանոնաւոր ընթացք ունենալ չէ կարող: Պէտք է նկատել որ բոլոր գործը այդ գպրոցներում ձրի է կատարուում: յօժարակամ օգնողներ լինում են ուրիշ տեղեր նաև բոլոր միւս դասակարգերից: Մեր գպրոցում ամենատանգուն աշխատողներից մէկն էր՝ ամենաբարձր աստիճան մի եկեղեցականի և մեծամուն ուսուցչապետի դուստրը:

յամապաշտութիւնը սկսուում է այստեղ յատկապէս մանկանց համար պատրաստած կրօնական երգերով: մէջ ընդ մէջ արտասանուում են աղօթքներ և սուրբ Գրքի ասացուածքներ: սովորաբար «բոյլ տաք մանկանցդ գալ առ իս...» խօսքը: Ապա ընդհանուր ղեկավարը կարգում է մի հատուած աւետարանի զիբըմբանելի տողերից՝ եթէ տօն է, ըստ աւուր պատշաճի: իբարանչիբ օգնող կարգացածը բացատրում է իբ խրմբին: յետայ ղեկավարը բոլորին միասին մի համաօտ քարոզ է խօսում նոյն այգ բացատրութեան համաձայն և վերջացնում է բուգէի թելադրած մի ընդհանրական աղօթքով: Արպէսզի ս. Գրքի բացատրութիւնը յաջող լինի և հակասութիւններ տեղի չունենան՝ բոլոր օգնողները օր առաջ ժողովուում են ընդհանուր ղեկավարի մօտ, որ նոցա առաջ կարգում է իբ ընտրած բնաբանը և բացատրում նոցա կարծիքները հարցնում: Բացատրութիւնը լինում է հորցութիործի եղանակով, յած ձայնով, որպէս զի մի խումբ միւսին չհամագարէ: Գործի յաջողութիւնը մեծապէս կախուած է ղեկավարի անձնաւորութիւնից: Բարեբաղդաբար մեր ընդհանուր ղեկավարը իբ աստուածաբանական հմասութեան հետ մէկ տեղ՝ ունէր այնպիսի խոր կրօնական ղգացումներով լի և պարզ կարելի է ասել մանկական հոգի, որ թէ մանուկների և թէ մեզ վերայ աղղում էր: Չնայելով, որ գպրոցը իմ բնակարանից մի ժամուոյ ճանապարհ էր ոտով և ես ուսու-

նողական ծանր գրադուներներով բեռնաւորուած էի՝ ամենայն սիրով շարաթն երկու անգամ գնում էի ես այնտեղ և միշտ մրխութարուած վերադառնում: Անպատմելի է այն ղգացմունքը, որ մարդ ունենում է այսպէս՝ հարիւրաւոր ջերմեանոյ, ամենայն երկիւղածութեամբ աղօթող մանուկների մէջ նստած: Նքթա մեծ մասամբ աղքատ, գործաւոր գասի ղաւակներ են, բայց ես համոզուած եմ, որ կիւրակնօրեայ գպրոցից տարած տպաւորութիւնների շնորհիւ նոցա 10-ից մէկը ընկերութեան վնասակար անղամ չի դառնալ: Մեր ղեկավարը աստուածաբանութեան նորագոյն ուղղութեան հետեւողներից լինելով՝ գործ չէր գնում հարկաւ պիտիստներին կամ կաթողիկների մէջ սովորական՝ կրօնասիրութիւն տարածելու միջոցները: ս. գրքի խօսքը, կենդանի անձնաւորութիւններն էին այգ բոլորի փոխարէն նոր աղղեցութիւն գործում: Եթէ ուսուցումն ինքն բստ ինքեան՝ կրօնի ուսուցումն տանապատիկ առաւել դժուարին գործ է, դժուարին մանաւանդ փոքրահասակ մանուկների համար, ոչ միայն ծանօթութիւններ հաղորդել, այլ և գոցա համաձայն ղգացումներ ներշնչել, ոչ միայն մեքենական գործողութիւններ կատարել տալ, այլ և նոցա մանկական հոգին գէպի վեր, գէպի երկնային աշխարհը ուղղել և նոցա յիշողութեան մէջ այնպիսի մտապաակներներ թողներ, որանց ոչ կեանքի փորձաութիւնը և ոչ գիտութեան հանած եղբակացութիւնները ջնջել կարող են: Այս եղանակով կրօն աւանդելու համար ոչ մի արտաքին միջոց չի օգնել, եթէ աւանդողն ինքը տագրուած չէ նոյն ղգացումներով ա ղաղափարներով, որ ուրիշներին հաղորդել է աշխատում: Մեր մանուկները, չընայելով որ կամաւոր էին գալիս և երբեմն նոյն իսկ ծնօղոց կամքին հակաակ՝ սովորաբար բարեխղձութեամբ ներկայ էին լինում որոշեալ ժամին և ամենայն սիրով հետեւում իրենց աւանդածին, նոցանից շատերը ս. Գրքից աւելի շատ տեղեկութիւններ և աւելի շատ կրօնական հակացողու-

թիւն ունէի՛ս քան աւայ բազմաթիւ եկեղեցական պաշտօնեաներ մեզանում:

Կիւրակնօրեայ դպրոցները իսկապէս մի ծիւղն են կազմում Արարատի սոյն համարում յիշատակուած Ենքընի Միսիոնի: Իւրաքանչիւր խմբի առաջնորդը բարոյական պարտականութիւն ունենալով տարին մի քանի անգամ իւր ձեռքի տակ եղած մանուկներին իրենց աներում այցելելու՝ միջոց է ստանում այդպիսով հասարակութեան դանազան խաւերի մանուանդ բանուոր դասակարգի հետ շփուելու և նոցա վերայ ազդեցութիւն գործելու: Բացի դորանից՝ որովհետեւ մեր դպրոցի մէջ գործող ոյժերը համեմատաբար շատ էին և յաճախող մանուկները քիչ՝ ղեկավարի առաջնորդութեամբ մենք սկսեցինք զոյգ զոյգ տները ման գալ և աշակերաններ հրաւիրել: Թէև մեր այցելութիւնները մեծ մասամբ սոցիալ-ընտանեկան բանուորների մօտ էին բայց միայն մի անգամ պատահեց որ մի կին գուռը մեր երեսին ծածկեց ինչքան էլ նորա եռանդուն հակառակորդներ լինին քրիստոնէութեան և հոգևորականութեան այնուամենայնիւ չէին կարող չողգուիլ երբ տեսնում էին թէ ինչպէս համալսարանական մարդիկ ներս են մտնում ամենախեղձ բնակարաններ հիւանդի մահճակալի մօտ նստում: միթէ արուս են երբեմն նաև բարեգործական ընկերութիւնների միջոցով նիւթական նպաստ հասցընում: Եւ նոքա մեծ մասամբ խստամտում էին իրենց որդիներին ուղարկել և շատ անգամ կատարում այդ խոստումը ինչքան էլ նոցա կարգազած լրագրների և գրքերի նոցա լսած ճառերի մէջ ասուած լինէր որ բոլոր հոգևորականները խաբերաններ են և շահասէր մարդիկ շարժուածքից խօսելուց՝ ամէն բանից պէտք է նկատէին նոքա որ այստեղ շահի խնդիր չիկայ: Բարոյական ազդեցութիւնն այնպէս բան է որ նորանից միայն ստից գլուխ փշոցած մարդիկ խոյս տալ կարող են: Եթէ անելի առողջները ազատ են մնում այդ ազդեցութիւնից՝

այդ նշանակում է ստիւրարար որ զիմացինի մէջ բարոյական ոյժ չը կայ:

Կիւրակնօրեայ դպրոցների մէջ էլ ինչպէս առհասարակ Գիւրակնայում՝ ամենագեղեցիկ օրը Ծնունդն է, երբ ղեկավարն և օգնողները տօնածառ են պատրաստում և ապա դորաշուրջ խմբելով մանուկներին՝ կրօնական երգերով ու անմեղ զուարճութիւններով տօն են կատարում: փոքրիկ ընծաներ բաժանում ամէնքին: Շատ չքաւոր գերդաստանների համար պատրաստուած են լինում նաև ուսուցիչի պաշարեղէնների որ օգնողները տանում: Ծածուկ մի կերպ նշանակուած անձի տանն են թողնում: Այս ամէնը գլուխ բերելու համար վիճակախաղութիւններ և ուրիշ այսպէս անմեղ ձեռնարկութիւններ են տեղի ունենում: Իւրաքանչիւր տարի կատարում է նաև դպրոցի սկզբնաւորութեան տարեգարձը ապա լինում են մի քանի այսպէս կոչուած թէյերկոյթներ, երբ ժողովում են նաև ծնօղները, բանաստուութիւններ են կարգադրում երգուում փոքրիկ նուագահանդէսներ կազմուում: — Իմ խմբի անդամներից մի քանիսի պատկերները գեռ կենդանի են յիշողութեանս մէջ: Աս նոցա ժառանգութիւն ստացայ Արարատի սոյն համարում յիշուած Գեօհրէից որ ջնայելով իւր հասարակական զիրքին՝ տարիներով մասնակցութիւն էր ունեցել կիւրակնօրեայ դպրոցում և միայն ծանր զբաղմունքների պատճառով ստիպուած եղաւ հրաժարուիլ: Իմ սաները լաւ նախապատրաստուած էին նորա մօտ ուստի և համեմատաբար անելի զիրքին էր ինձ օտար արտասանութեամբ նոցա բան հասկացնել: Նորա գիտէին ի հարկէ որ ես օտար երկրից հայաստանցի եմ և մէկը ինձ գրքի մի փոքրը նշան նուիրելով կամենում էր անպատճառ Հայաստանից բերած մի ընծայ ստանալ: Ինչքան ուրախացաւ երբ կարողացայ նորան ս. Եջմիածնի պատկերը տալ:

Ինչպէս գեղեցիկ կլինէր, եթէ մեր եկեղեցական—ծխական դպրոցները նոյն այս ոգւով ղեկավարուէին՝ կիւրակէ օրերը կը-

րօնասուցչի գեկափարութեան ներքոյ մանուկներին ժողովէին և խուճր խուճր բաժանելով նոցա երգել տային, աւետարանից կարգային կրօնական գիտելիքներ հարգէին, սրնոցից այնպէս զօրկ են մեղանում գէրազգաբար ոչ միայն փոքրերը այլ նաև հասակաւորները:

Կ. Մ.



ՊԵՏԻ Է ԸՐԴԵՕՔ ԸՆԶԱՍԵԼ ԲԱՐՈՅԵԿԸՆՈՒ-
ԹԻՒՆԸ ԿՐՕՆԻՑ:

Եւրոպական գրականութեան մեջ այս տարի մի ուժեղ հասանք է նկատուում գեպի կրօնական խնդիրը: Արջին ժամանակներս եւրոպական ազգերից ոմանք կրօնը արհամարհանքի մասնեցին և սկսան զիտութեան գերակշռութիւնը դաւանել, բայց այժմ արդէն իսկ նկատելի են այդ ուղղութեան կորստաբեր հեռանքներն ուստի ժամանակիս նշանաւոր փիլիսոփաներն ու գրագէտները սկսել են հեռացնուիլ բողոքել այդ ընթացքի դէմ: Հակակրօնական ուղղութիւնն այնքան առաջ գնաց, որ գլորոցներից վերացրեց կրօնի ուսուցումն փոխարէնը գնելով բարոյագիտութեան դասերը: Սակայն այժմեան փիլիսոփայութիւնը մի հանրական և ամէնին ընդունելի բարոյագիտութեան սիստեմ՝ չունի, դիւրին էր գուշակել, որ այդպիսի առարկայի աւանդումն գլորոցներում պիտի անմտութեան (absurde) հասցնէր: Եւհա այդ խնդրին են նուիրուած հեռեեւոյ տողերը գերմանական մի մանկավարժական թերթի, որ թարգմանաբար յառաջ ենք բերում:

1882 թ. Ֆրանսիական ժողովրդական դպրոցներում դադարեցրին կրօնի դասերը և նորա տեղ իրրև դպրոցական պարտաւորեցուցիլ աւարկայ, այսպէս սասած: Ըարոյականութեան դասեր նշանակեցին: Գրանսիացի ժողովրդի առաջնորդող շրջանները կարծում էին, թէ այդպիսով գործը զրոյն կտանեն և ազազայ սերնդի բարոյականութիւնը կրարձրացնեն: Ուսուցչական սեմինարներում մեծ եռանդով սկսեցին բարոյականութիւն սովորել և այս նոր աւարկայի համար էլ պակաս չէր սիրոյ առաջին կրակը: Բայց բարոյականութեան ուսուցիչները շուտով մեծ տարակուսանքի մէջ ընկան թէ ի՞նչ

է նշանակում բարոյականութիւն, ինչ առարկաներ են պատկանում սորան, ի՞նչ պէտք է անել գոնհիւթեան (Trivialität) մէջ չընկնելու և ի՞նչ «կրօնական» չը լինելու համար: Եւսպէսնութիւն և ուսուցման առարկային վերաբերեալ խնդիրների մթութիւնը առաջին մեծ վնասն էր, որից նեղուում էր Ֆրանսիական դպրոցի այս նորածին մանուկը:

Եւնուամենայնիւ շատերը փառաւոր հեռեանքներ էին սպասում: 1889 թ. համաշխարհային ցուցահանդիսի մէջ ամբողջ աշխարհին Գրանսիան պիտի երևար իւր բոլոր մեծութեամբ, պակաս տեղ չպէտք է բռնէր այդ փառքի մէջ և Ֆրանսիական դպրոցը: Առաւփարութիւնը պատուիրել էր, որ ժողովրդական դպրոցների բոլոր վերատեսուչներն և տեսուչները տեղեկութիւններ ուղարկեն և յատկապէս բարոյականութեան ուսուցման վիճակի և հեռեանքների մասին: Եւթը տարուայ փորձառութիւնից յետոյ կարելի էր տեսնել այս նոր ծառի պտուղները: 558 հասլաւ մշակուած, մանրամասն հաշուէթղթեր էին ուղարկուած: Փարիզի համալսարանի բողոքական աստուածաբանութեան բաժնի ղեկան Ի իստներերգը այս նիւթերը դասաւորել, մշակել և հրատարակել է մի հաստափոր հատորի մէջ: Մենք ոչ մի կասկած չունինք այս հրատարակութեան առարկայականութեան (Objektivität) և անաչառութեան մասին. նա հիմնուած է իսկական աղբիւրների վերայ: Բացի դորանից Ի իստներերգը ժողովրդական դպրոցներն աշխարհականացնելու սկզբունքի պաշտպան է, ուստի և նորա կարծիքն աւելի մեզ հակառակ կողմը պիտի հակուէր:

Եւդ, ի՞նչ հեռեանքի հասան Ֆրանսիացիք իրենց բարոյականութեան ուսուցմամբ: Տեսուչներից մի քանիսը տեղեկագրում են, տղաները կենդանիներին այլևս չեն չարաբում հասակով սաները այլ ևս չեն ծնծում կրտսերներին: Համայնքի և պետութեան սեպհականութեան դէմ եղած օրինազանցութիւնները հազուադիւս են զարձել, հասարակաց պարտեղները այլ ևս չեն վնասուում: Մանուկներն այժմ աւելի պակաս են ստում: Սքանչելի է ուրեմն: Եւելի բան ցանկալ չէր կարելի: Եւ եթէ Ֆրանսիական դպրոցները մեծ մասով այդ գրութեան են հասել, այն էլ այդպիսի մի հասարակ միջոցով—բարոյականութեան դասերով: ուրեմն մեր (գերմանական) դպրոցները շատ յետ են, քանի որ իրուարանական վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ մեր ժողովրդի թերութիւններն ամուսն են և այդ բանի մէջ մեղադրուում է նաև զըպ-

1. տես Schulblatt für die Provinz Brandenburg. 1895. յուլ. օդ.